



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

**Արձանագրություն**

Արևելագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. Սեպտեմբերի 19-ի թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 18-ը:

Օրակարգում

1. Անցկացնել ԵՊՀ գիտխորհուրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրությունը
2. Լսել Դավիթ Հովհաննիսյանի թեկնածությունը պրոֆեսորի կոչմանը երաշխավորելու հարցը
3. Լսել Իրանագիտության ամբիոնի կողմից հրատարակության պատրաստված «Թալիշ ժողովրդի պատմության և մշակույթի ներածություն» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
4. Լսել ամբիոնների կողմից ներկայացված թեկնածությունները հայցորդության ձևակերպման և հեռակա ասպիրանտուրա ընդունելու երաշխավորման հարցը
5. Լսել ամբիոնների կողմից ներկայացված թեկնածուների ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարների հաստատելու հարցը
6. Տեղեկացնել խորհուրդին ԵՊՀ նոր կանոնադրության հետ կապված փոփոխություններին
7. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ –

1. ԵՊՀ գիտխորհուրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրությունների անցկացման հարցը
2. Դավիթ Հովհաննիսյանի թեկնածությունը պրոֆեսորի կոչմանը երաշխավորելու հարցը
3. Իրանագիտության ամբիոնի կողմից հրատարակության պատրաստված «Թալիշ ժողովրդի պատմության և մշակույթի ներածություն» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
4. ամբիոնների կողմից ներկայացված թեկնածությունները հայցորդության ձևակերպման և հեռակա ասպիրանտուրա ընդունելու երաշխավորման հարցը.
  - Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտություն ամբիոնի մագիստրատուրայի 2011 թ շրջանավարտ Դիանա Կարապետյանին հայցորդ ձևակերպելու երաշխավորման հարցը:

- Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտություն մասնագիտության 2008-2010 ուս. տարվա մագիստրատուրայի շրջանավարտ Անուշիկ Հովհաննեսի Մարտիրոսյանի՝ թյուրքագիտության ամբիոնում հայցորդ ձևակերպելու երաշխավորման հարցը
  - Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտություն ամբիոնի մագիստրատուրայի 2011 թ շրջանավարտ Նաիրա Պողոսյանին հեռակա ասպիրանտուրայի քննություններին մասնակցելու երաշխավորման հարցը:
5. ամբիոնների կողմից ներկայացված թեկնածուների աստենախոսության թեմաների և գիտական ղեկավարների հաստատելու հարցը
    - Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտություն ամբիոնի ասպիրանտ Էդգար Արմենի Խաչատրյանի աստենախոսության թեմայի հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու հարցը
  6. ԵՊՀ նոր կանոնադրության մեջ տեղ գտած փոփոխությունների մասին
  7. Մագիստրատուրայի մինիմում թվաքանակակի ապահովման հետ կապված խնդիրների հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Յ Ի Ն – Արևելագիտության ֆակուլտետի ղեկան բ.գ.թ. պրոֆ. Գ. Մելիքյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ., դոցենտ Ս. Տոնիկյան, իրանագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. պրոֆ. Գ. Ասատրյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ պ.գ.թ., դոցենտ Ա. Սաֆարայնը, ղեկանի տեղակալներ բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանը և բ.գ.թ., դոցենտ Վ. Ոսկանյանը, արաբագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Դ. Հովհաննիսյանը, դոցենտ, բ.գ.թ. Ս. Կարաբեկյանը և իրանագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վ. Առաքելովան, ուսխորհրդի նախագահ Գ. Ավագյանը և Արևելագիտության ֆակուլտետի գիտժողովի քարտուղար պ.գ.թ., դոցենտ Հ. Քոչարյանը և այլք:

## Ո Ր Ո Շ Ե Յ Ի Ն

1. Ստեղծել հաշվիչ հանձնաժողով՝ Ս. Տոնիկյանի նախագահությամբ և Լ. Սահակյանի ու Հ. Կիրակոսյանի մասնակցությամբ: Հիմք ընդունելով հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ փակ գաղտնի քվեարկության արդյունքում երկու առաջադրված թեկնածուներից (Գ. Ս. Ասատրյան և Ս.Բ. Կարաբեկյան) ԵՊՀ գիտխորհուրդում ֆակուլտետի ներկայացուցիչ ընտրվեց իրանագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. պրոֆ. Գ. Ասատրյանը:
2. Երաշխավորել Դավիթ Հովհաննիսյանի թեկնածությունը պրոֆեսորի կոչմանը ներկայացնելու համար:
3. Իրանագիտության ամբիոնի կողմից հրատարակության պատրաստված «Թալիշ ժողովրդի պատմության և մշակույթի ներածություն» մենագրության

ամբողջական և վերջնական տեքստը ներկայացնել հաջորդ գիտխորհրդի նիստին՝ նախապես հնարավորություն տալով գիտխորհրդի անդամներին ծանոթանալ քննարկվող մենագրության հետ:

4. Երաշխավորել ամբիոնների կողմից ներկայացված թեկնածությունները.
  - Երաշխավորել Դիանա Կարապետյանին թյուրքագիտության ամբիոնում հայցորդ ձևակերպվելու համար
  - Երաշխավորել Անուշիկ Հովհաննեսի Մարտիրոսյանին թյուրքագիտության ամբիոնում հայցորդ ձևակերպվելու համար
  - Երաշխավորել Նաիրա Պողոսյանին հեռակա ասպիրանտուրայի քննություններին մասնակցելու համար:
  
5. Հաստատել ամբիոնների կողմից ներկայացված թեկնածուների ատենախոսության թեմաները և հաստատել գիտական ղեկավարները
  - Հաստատել Էդգար Արմենի Խաչատրյանի ««Փոքր մարդու» կերպարը թյուրքական արձակույթում, 1950-70-ական թթ.» ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոցենտ Ռ. Մելքոնյանին և Ժ 01.07 «Արտասահմանյան գրականություն» շիֆրով ատենախոսություն ղեկավարելու համար համապատասխան թույլտվության համար, դիմել ՀՀ ԲՈՀ:
  
6. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի անդամները տեղեկացվեցին ԵՊՀ նոր կանոնադրության մեջ տեղ գտած փոփոխությունների մասին
  
7. Հաշվի առնելով որոշ մասնագիտությունների առանձնահատկությունը հատուկ առաջարկ-նախաձեռնությամբ հանդես գալ ԵՊՀ համապատասխան ստորաբաժանմանը: Առաջարկը ձևակերպելու և մշակելու համար որոշվեց ստեղծել աշխատանքային խումբ՝ Ս. Կարաբեկյանի, Հ. Քոչարյանի և Վ. Ոսկանյանի մասնակցությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
Իսկականի հետ ճիշտ է՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ